


# Մանուկներու Սուրբ Գիրքը կը ներկայացնէ




## Եղիսէն, հրաշքներու մարդը




Written by: Edward Hughes  
Illustrated by: Lazarus; Alastair Paterson  
Adapted by: Ruth Klassen  
Translated by: Most Rev. Prof. Varant Zareh Seropian  
dedicated to my Son Lordling Zareh Varant  
funded by: Zareh Seropian & Sons Foundation  
special thanks: to my wife  
gifted to all the Armenian children around the world. This translation  
has been done in the Grace of the Holy Trinity to whom I owe.  
Produced by: Bible for Children  
[www.M1914.org](http://www.M1914.org)

BFC  
PO Box 3  
Winnipeg, MB R3C 2G1  
Canada

©2021 Bible for Children, Inc.  
License: You have the right to copy or print this story,  
as long as you do not sell it.




Բաւական եգեր չկային  
քաշելու համար Plow: Մէկ  
հատ եւս պէտք կար: Սակայն  
այդ չկեցուց երիտասարդ  
պարտիզպանը, որ Եղիսէ  
կը կոչուէր:



Ինքը մասնակցեցաւ  
եզրերուն հետ մէկ պակասին  
տեղը առնելով: Ան պետք էր,  
որ զօրաւոր եւ խելացի  
տընաջան աշխատող  
մարդ մը ըլլար:


3



Երբ Եղիսէ կը հերկէր,  
Աստուծոյ մարգարէն  
Եղիան եկաւ եւ անոր  
կանչեց: Երիտասարդը  
ձգեց ագարակը եւ գնաց  
Աստուծոյ ծառան ըլլալու:  
Օր մը, Աստուած Եղիան  
երկինք բարձրացուց մեծ  
փոթորիկով մը:

Հիմա Եղիսէ ինքն  
էր Աստուծոյ  
մարգարէն  
հարայելի մէջ:

4



Թէեւ Եղիսէ տխուր էր, որ  
Եղիան գնաց, ան աղօթեց  
Աստուծոյ, որ իրեն Եղիայի  
սման ուժ տար, Եղիսէ վերցուց  
Եղիային վերարկուն եւ  
զարկաւ գետին

քալող ջուրը  
ինչպէս Եղիա  
ըրած էր:

5




Ջուրը բաժնուեցաւ,  
հիմա Եղիսէ գիտցաւ,  
որ Աստուած իր հետ է:

6



Երբ Եղիսէ Պեթել  
կոչուող քաղաքը  
կ'երթար, քանի մը  
երիտասարդներ  
անոր ծաղրեցին  
կանչելով զինք. "Վեր  
ել, դուն ճաղատ": Անոնք  
կարեւորութիւն չէին տար,  
որ Եղիսէ Աստուծոյ ծառան  
է: Սարսափելի բան մը  
պատահեցաւ անոնց:  
Երկու եզ արջեր եկան  
անտառէն եւ թակեցին  
քառասուններկու  
երիտասարդները:

7



Օր մը Եղիսէ հանդիպեցաւ այրի կնոջ մը, որ պարտք  
ունէր եւ չէր կրնար վճարել: Առնելու համար իր  
դրամը մարդը դրամի  
փոխարէն կնկան  
տողաքը իբր ծառայ  
պիտի առնէր.  
"Գնա՛, երկու տոր  
կաթսայ բեր  
դրացիներուդ  
քովէն... պարսպ  
կարասներ", ըսաւ  
Եղիսէ: Աստուած  
շտորիակի բան մը  
պիտի ընէր այդ կնոջ:


8

Այրի կնկան տան մէջ պզտիկ ամանի մը մէջ միայն քիչ մը ձեթ կար, սակայն ան այդ քիչ ձեթով լեցուց բոլոր այդ կաթասները: Եթէ լոգանքի ամաններ ունենային, կը կարծե՞ս որ Աստուած կը լեցներ ատոնք ալ: Այրի կինը ծախեց այդ ձեթերը եւ ազատեց իր զաւակները:



9

Ուրիշ կին մը եւ իր ամուսինը մասնաւոր սենեակ մը շտկեցին, որպէսզի Եղիսէ հոն ապրի երբ այդտեղէն անցնի: Սենեակին մէջ կար մահճակալ, սեղան, աթոռ եւ լուսամփոփ: Այս սենեակը միայն Եղիսէի համար էր:




10

Եղիսէ մտածեց, թէ ինչպէս կրնայ այս գոյգին լաւութիւնը գնահատել: Երբ գիտցաւ, որ զաւակ չունէին, ան բան մը ըրաւ, որ կինը կրնար հաւատալ: "Գալ տարի այս ատեն դուն տղայ մը պիտի ունենաս":



11

Տարիներ ետք նոյն պզտիկը հորը հետ դաշտ գացած էր: "Գլուխս, գլուխս", պռռաց տղան: Երբ տղան մօրը քով բերին, ան մօրը գիրկը նստաւ մինչեւ կէսօր եւ մեռաւ: Մայրը պզտիկը պառկեցուց Եղիսէի սենեակին անկողինին վրայ: Ո՞վ կը կարծես կրնար օգնել անոր:




12

Եղիսէ՞ն ըսիր: Ճիշդ է: Ան էլը պատրաստեց եւ ամենաարագ ձեւով ճամբայ ելաւ անոր փնտռելու: Եղիսէ կնկան տունը եկաւ վեր ելաւ առանձին եւ Տիրոջ աղօթեց: Աստուած մանչուկը կեանքի վերադարձուց: Եղիսէ կնկան կանչեց եւ ըսաւ. "Վերցուր տղուդ": Որքան ուրախ պետք էր ըլլար ան:




13



Մօտակայ Սուրիոյ մէջ կ'ապրէր բանակի հրամանատար մը, որ Նէեման կը կոչուէր: Ան զօրաւոր եւ քաջարի մարդ մըն էր, բայց սոսկալի մորթի հիւանդութիւն ուներ, որ բորոտ կը կոչուէր:


14

Նեեմանի կինը պզտիկ ծառայ աղջիկ մը ուներ, որ Իսրայելէն պատանդ բռնուած էր: Այս պզտիկ աղջիկը ըսաւ. "Եթէ միայն Նեեման մարգարէին հետ ըլլար Իսրայել ան անկասկած առողջացած կ'ըլլար":



15

Նեեման շուտով գնաց տեսելու մարգարէն: Ան իր հետ առաւ արծաթ, ոսկի եւ գեղեցիկ հագուստներ իբր նուէր:



16


Եղիսէին ծառան դուրս եկաւ եւ ըսաւ. "Գնա եւ Յորդանանի գետին մէջ եօթը անգամ լուացուիր եւ պիտի մաքրուիս":



Նեեման ջղայնացաւ: Զէ՛ր կրնար իր հողին Սուրիոյ մաքուր ու գուլլալ գետին մէջ լուացուիլ: Չայրացած ան նորէն իր տունը դարձաւ:

17

Բարեբախտաբար, Նեեմանի ծառաները անոր գետ տարին եւ հնազանդեցան Եղիսէի հրամանին: Ուրեմն Նեեման եօթը անգամ իջաւ եւ ելաւ Յորդանանի գետին մէջ եւ ան առողջացաւ:




18

Այդկէ ետք Նեեման պաշտեց իրաւ Աստուածը, Եղիսէին Աստուածը, Տէրը, որ իրեն փորոտութենէ մաքրեց:




19

Աստուած օգտագործեց իր ծառան Եղիսէն նոյնիսկ իր մահէն ետք: Օր մը մարդ մը թաղուեցաւ նոյն քառայրին մէջ, որ Եղիսէն թաղուած էր երկար ժամանակ առաջ:



20



Երբ մեռած մարդուն մարմինը դպաւ մարգարէին ոսկորներուն, մարդը վերապրեցաւ եւ ոտքի ելաւ: Իրաւ, Աստուած Իր հզօր ուժը ցոյց տուաւ իր հաւատարիմ ծառային Եղիսէի միջոցով:

21


Եղիսէն, հրաշքներու մարդը  
Աստուծոյ խօսքէն պատմութիւն մը,  
Սուրբ Գիրքը:

Կը գտնուի հետեւեալին մէջ

2 Թագաւորաց 2 - 13

"Քու խօսքիդ մուտքը լոյս կը ցոլացնէ:"  
Սաղմոս 119:130

22



25

60

23

Այս Սուրբ Գիրքի պատմութիւնը մեզի կը պատմէ մեր հրաշալի Աստուծոյ մասին, որ մեզ ստեղծեց եւ կ'ուզէ, որ մենք զինք ճանչնանք:

-Աստուած գիտէ, թէ շատ գէշ բաներ ըրած ենք, որոնք Ինք մեզ կը կոչէ: Մեղքին պատիժը մահն է, սակայն Աստուած այնքան մեզ կը սիրէ, որ Իր Որդին Յիսուսը մեզի դրկեց, որպէսզի հաշին վրայ մեռնի եւ մեր մեղքերուն համար պատժուի: Ետքը Յիսուս համբարձաւ եւ դրախտ՝ իր տունը բարձրացաւ: Եթէ կը հաւատաս Յիսուսին եւ իրմէ կը պահանջես որպէսզի ներքէցի քու մեղքերուդ համար, Ան կը ներէ: Ան կու գայ եւ մէջդ կը բնակի իսկ դուն յաւիտեան Իր հետ:

Եթէ կ'ուզես մեղքերեդ ազատիլ, հետեւեալը ըսէ Աստուծոյ: Տէր Աստուած ես կը հաւատամ, որ Յիսուս մահացաւ ինձի համար եւ հիմա Ան անգամ մը եւս կ'ապրի: Կ'աղաչեմ, որ գաս իմ կեանքիս մէջ եւ ներես բոլոր մեղքերս, որպէսզի կարենամ նոր կեանք մը ապրիլ, եւ օր մը հետո՞ղ ըլլամ, յաւիտեան: Օգնէ ինձ որպէսզի քեզի համար ապրիմ քու որդիիդ պէս: Ամէն:

Կարդայ Սուրբ գիրքը եւ ամէն օր Աստուծոյ հետ խօսիր:  
Յովհաննու 3:16

24